ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«04» փետրվարի 2019 թվականի № 31-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ-113 և 2018 թվականի նոյեմբերի 01-ի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 2612 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018թ. օգոստոսի 21-ի թիվ Ֆ-255/18 գրությունը, «ԽԱՐԿՈՎ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության 2018թ. օգոստոսի 10-ի գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԽԱՐԿՈՎ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 45 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թիվ ՇԱԹ-29/597 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Խարկովի տուֆի և պեմզայի հանքավայրի պաշարների 1.X=4486553 Y=8380172, 2.X=4486796 Y=8380042, 3.X=4486756 Y=8380141, 4.X=4486735 Y=8380165, 5.X=4486724 Y=8380202, 6.X=4486710 Y=8380306, 7.X=4486734 Y=8380380, 8.X=4486765 Y=8380649, 9.X=4486698 Y=8380656 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տարածքներում արդյունահանում կատարելու համար, հատկացնել 730300 մ³ տուֆի մարվող պաշար և լեռնահատկացման թիվ Լ-597 լեռնահատկացման ակտը՝ 1.X=4486484 Y=8380208 H=1459.4 h=0, 2.X=4486796 Y=8380042 H=1436.0 h=0, 3.X=4486756 Y=8380141 H=1433.0 h=0, 4.X=4486735 Y=8380165 H=1433.0 h=0, 5.X=4486724 Y=8380202 H=1430.0 h=0, 6.X=4486710 Y=8380306 H=1427.0 h=0, 7.X=4486734 Y=8380380 H=1427.0 h=0,

8.X=4486765 Y=8380649 H=1433.0 h=0, 9.X=4486517 Y=8380676 H=1470.0 h=0, 10.X=4486547 Y=8380451 H=1460.8 h=0, 11.X=4486525 Y=8380303 H=1458.8 h=0 տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 11,5 հա տարածքով:

2. Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել 15000 մ³ տուֆի զանգված:

3.Կնքել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-597 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը.

2) հրավիրել ընկերությանը 10-օրյա ժամկետում վավերացնելու (ստորագրելու և կնքելու) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Խարկովի տուֆի և պեմզայի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման ընդերքօգտագործման թիվ Պ-597 պայմանագիրը.

3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6.Սույն հրամանն ուժ մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

2/4/2019

X

VERIFIED OCSP 04-Feb-19 11:08:05 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118